«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-13-27-00

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(2019-2020 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

ք. Իջևան «26» մայիսի 2020թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Սեմինար-քննարկում	«ՀՀ նախագահությունը ԵԱՏՄ-ում 2019 թվականին. ձեռքբերումներն ու առկա խնդիրները»	29.02	ԵՊՀ ԻՄ-ի գրադարանում կայացավ հանդիպում ԱԺ փորձագետ, պ.գ.թ., դոցենտ Գրիգոր Բալասանյանի հետ: Այն ընթացավ քննարկման ձևով և խոսվեց վերջին շրջանում ԵԱՏՄ-ի կազմում ՀՀ նշանակալի ձեռքբերումների մասին, մաքսային համակարգի կանոնների, տարածաշրջանում Հայաստանի կարևոր դերի մասին, Հայաստան-Ռուսաստան և Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների և Հայաստանի արտաքին քաղաքականության ու ներդրումների մասին: Ուսանողները իրենց հետաքրքրող հարցերը ուղղեցին՝ ստանալով սպառիչ պատասխաններ: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ գրադարան**
2.	Զեկույցների տպագրություն	«Անկախության առաջնեկը» խորագրով հանրապետական գիտաժողովի	21.05	Նախորդ կիսամյակում իրականացվել էր հանրապետական գիտաժողով՝ նվիրված մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին, որին մասնակցել են շուրջ 40 ուսանողներ՝ 12-ը՝ մասնաճյուղից, մնացածը՝ ՀՀ 5 բուհերից: Արդեն էլեկտրոնային տարբերակով հասանելի են գիտաժողովների զեկույցները, որոնք զետեղված են «Ակունք» գիտամեթոդական հանդեսի առանձին համարում՝ 1(22): Հունիսին լույս կտեսնի նաև թղթային տարբերակը: **Համագործակցություն՝ «Ակունք» գիտամեթոդական հանդես**
3.	ՈՒԳԸ ինստագրամյան պաշտոնական էջի բացում	Հրապարակումներ ծրագրերի, տարբեր թեմաների, փաստերի մասին	05.03-ից սկսած	Այս կիսամյակից սկսած բացվեց ՈՒԳԸ ինստագրամյան պաշտոնական էջը: Կայքում տեղադրվում են ոչ միայն ՈՒԳԸ-ի տարբեր միջոցառումների մասին ինֆորմացիա, այլ նաև նյութեր տարաբնույթ

				թեմաներից: Կայքի միջոցով կազմակերպվում են տարբեր բնագավառների վերաբերյալ վիկտորինաներ, արդեն իսկ թվով՝ 7 վիկտորինա:
4.	Քայլարշավ	Դեպի Մակարավանք և Աչաջրի հին գյուղատեղի	13.03	ՈՒԳԸ 10 անդամներ ճանաչողական քայլարշավ իրականացրին դեպի Հին Աչաջուր և Մակարավանք:
5.	Վիկտորինաների շարք	Թեմատիկ վիկտորինաներ	04.04-ից սկսած	ՈՒԳԸ-ի ինստագրամյան էջում պարբերաբար տեղադրվել են 10 հարցից կազմված թվով 7 վիկտորինաներ՝ նվիրված տարբեր թեմաների: Առաջին վիկտորինայի հարցերը ընդհանուր զարգացվածության բնույթի էին, մնացած 6-ը հետևյալ թեմաներով՝ պատմություն, տնտեսագիտություն, արվեստ, հայոց լեզու և գրականություն, ծրագրավորում, աշխարհագրություն: Յուրաքանչյուր վիկտորինային մասնակցում էին միջինում 30-40 օգտատեր՝ մեծամասամբ ուսանողներ:
6.	Ինտելեկտուալ առցանց խաղ	quizizz.com կայքի միջոցով	06.04	Խաղը անցկացվեց quizizz.com կայքի միջոցով: Պատրաստվել էր ընդհանուր զարգացվածության բնույթի 20 հարց, յուրաքանչյուր հարցի համար տրված էր 20 վայրկյան ժամանակ: Խաղի հաղթողները պարգևատրվելու են գրքերով:
7.	Սեմինար-քննարկում	«Հետազոտական աշխատանք գրելու հմտություններ»	18.04	Zoom հարթակի միջոցով կայացավ առցանց սեմինար, որին մասնակցեցին շուրջ 25 ուսանողներ: Սեմինարը վարեց «Տնտեսագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Հրանտ Ղարագյոզյանը: Սեմինարը բաղկացած էր 2 հիմնական մասից՝ տեսական և գործնական: Տեսական մասում ուսանողները ծանոթացան հետազոտական աշխատանք գրելու կարևորագույն սկզբունքներին, բովանդակային և տեխնիկական պահանջներին, իսկ արդեն գործնական մասում ցույց տրվեցին MS Word էլեկտրոնային խմբագրիչի մի շարք գործիքների հետ աշխատելու կարգը, տեքստը Ansi շարվածքից Unicode-ի փոխարկելու մեթոդները և այլն: Սեմինարի ընթացքում նաև խոսվեց Google որոնողական համակարգի որոշ օպերատորների մասին, որոնք ավելի են հեշտացնում առցանց տիրույթում արդյունավետ որոնումներ իրականացնելու գործընթացը:
8.	Ասմունք՝ վիդեո տարբերակով	Նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին	24.04	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսի 5 ուսանողուհիներ ասմունքել են Պ. Սևակի

				«Անլռելի զանգազատուն» պոեմից մի հատված՝ Ղողանջ եղեռնականը: Ասմունքը վիդեո տարբերակով տեղադրված է մեր ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:
9.	Սեմինար-քննարկում	«Աշխարհը՝COVID 19-ից առաջ և հետո»	05.05	Առցանց քննարկում կայացավ Zoom հարթակի միջոցով: Քննարկմանը մասնակցեցին շուրջ 35 ուսանողներ և դասախոսներ: Այն վարեց ՀՀ Կենտրոնական բանկի Հատուկ հետազոտությունների բաժնի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գևորգ Մինասյանը: Նախ, խոսվեց կորոնավիրուսի կանխարգելման և հաղթահարման միջազգային փորձի մասին, քննարկվեցին առավել հետաքրքիր մոդել ունեցող երկրները, ինչպես նաև դրանց՝ մեր տնտեսության մեջ հնարավոր ներդրման ճանապարհները: Քննարկվեցին միջազգային ֆինանսական շուկայում տիրող իրավիճակը և դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Քննարկումը կրում էր ինտերակտիվ բնույթ, դիտարկվում էին ուսանողների կողմից առաջադրված բոլոր տեսակետները: **Համագործակցություն՝ ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն**
10.	Գրքի խաղարկություն	Գոհար Նավասարդյան, «Ինձ պիոններ չնվիրես»	19.05-24.05	Հայտարարվեց խաղարկություն. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ կանոնները հրապարակվեցին: Գրքի սեփականատերը ընտրվեց 24.05.2020 թվականին՝ պատահականության սկզբունքով՝ commentpicker.com կայքի միջոցով:

11.	Ինտելեկտուալ խաղ-	«Ամենախելացին»	25.05	Խաղին մասնակցում էին 9 ուսանող՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից: Այն կայացավ Zoom հարթակի միջոցով: Խաղի առաջին փուլն անցկացվեց բջջային հատուկ հավելվածի՝ Quizizz-ի օգնությամբ, տրվեց ընդհանուր զարգացվածությունն ստուգող 10 հարց, ընդ որում՝ մասնակիցները լրացուցիչ միավորներ էին վաստակում նաև հարցերին արագ պասասխանելու համար: Առավելագույն միավոր հավաքած 5 ուսանողները հնարավորություն ստացան խաղը շարունակել երկրորդ փուլում: Երկրորդ և երրորդ փուլն արդեն հնարավորինս նմանեցված էր համանանուն հեռուստախաղի ձևաչափին, այդ նպատակավով համակարգչային ծրագիր էր ստեղծել Բնական գիտությունների ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Արայիկ Շահնազարյանը: Արդեն երրորդ փուլ անցած երեք մասնակիցները (Օվսաննա Մատինյան, Թինա Թամրազյան, Նարե Թիրաբյան) պատասխանում էին իրենց կողմից իսկ ընտրված թեմային վերաբերող հարցերին: «Ամենախելացին 3» ինտելեկտուալ խաղի հաղթող ճանաչվեց «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Օվսաննա Մատինյանը:
12.	Էսսեների մրցույթ	"Գեղեցկության խորհուրդը" և "Գարունը թող միշտ սեր բերի"	10.05-05.06	Ընդհանուր ներկայացվել է 6 էսսե: Համագործակցելով «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի հետ, ընտրվել են երեք հաղթողներ: Մրցույթի հաղթող ճանաչվեց «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Նունե Վարդումյանը: Մրցանակային 2-րդ և 3-րդ հորիզնական զբաղեցրին, համապատասխանաբար, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ագնեսա Աթաբեկյանը և «Պատմություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Յարալյանը: Հորիզոնականներ զբաղեցրած ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով, իսկ հաղթողը նաև անակնկալ նվերով: **Համագործակցություն՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոն**
13.	Լուսանկարների մրցույթ	«Բնության հրաշք, որ ծնում է երևակայություն» և «Այնտեղ, ուր կանաչը գրկում է	13.05-05.06	Ընդհանուր ներկայացվել է 15 լուսանկար: Համագործակցելով «Դիզայն» բաժնի հետ՝ ընտրվել են երեք հաղթողներ: 1-ին հորիզոնականն է զբաղեցրել «Ինֆորմատիկա և կիրառական

		կապույտին»		մաթեմատիկա» մասնագիտության հեռակա բաժնի 2-րդ կուրսի ուսանող Ալբերտ Ալիխանյանը: Համապատասխանաբար 2-րդ և 3-րդ հորիզոնական են զբաղեցրել «Սերվիս» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Տիգրան Ղուշչյանը և «Պատմություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Շիրակ Գասպարյանը: Հորիզոնականներ զբաղեցրած ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով, իսկ հաղթողը նաև անակնկալ նվերով: **Համագործակցություն՝ Դիզայնի ամբիոն**

Մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ՝ Մ. Ասիլյան

քարտուղար՝ Ա. Խաչատրյան